ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.11.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/152

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 29.10.2018թ. թիվ 01.1/26-3/19554-18 գրությամբ «Անիկո ֆարմ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 24.10.2018թ. թիվ 09/1663 գրության հիման վրա, 29.10.2018թ. «Անիկո ֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>«Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը 24.10.2018թ. թիվ 09/1663 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ 27.09.2018թ. «Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարվել է ԷԱՃԱՊՁԲ-2018/16-3-ԵՊԲՀ ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով բժշկական սարքավորումների, գործիքների և պարագաների գնման ընթացակարգ: Էլեկտրոնային աճուրդի մասնակիցների թվում հայտ է ներկայացրել նաև «Անիկո ֆարմ» ՍՊԸ-ն, որը գնահատող հանձնաժողովի 09.10.2018թ. թիվ 2 որոշմամբ ճանաչվել է 7-րդ, 8-րդ, 10-րդ, 11-րդ, 20-րդ, 22-րդ և 23-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ ԷԱՃԱՊՁԲ-2018/16-3-ԵՊԲՀ ծածկագրով էլեկտրոնային աճուրդի քարտուղարը 09.10.2018թ. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացրել «Անիկո ֆարմ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Գնահատող հանձնաժողովի 16.10.2018թ. թիվ 3 որոշմամբ արձանագրվել է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 15.10.2018թ. և 16.10.2018թ. ճշտված եզրակացությունների համաձայն՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ «Անիկո ֆարմ» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների չափը գերազանցել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված շեմը:

Գնահատող հանձնաժողովի 18.10.2018թ. թիվ 4 որոշմամբ արձանագրվել է, որ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված ժամկետում «Անիկո ֆարմ» ՍՊԸ-ն չի ներկայացրել որակավորման փաստաթղթերը:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի լիազորված ներկայացուցիչ Տատյանա Միրզոյանը:

3. «Անիկո ֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 29.10.2018թ. գրությամբ դիմել է «Անիկո ֆարմ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.10.2018թ. թիվ 01.1/26-3/19554-18 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել:

«Անիկո ֆարմ» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն Ընկերության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

4. ՍՑ-ԷՍ-2018/152 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 29.10.2018թ. թիվ 01.1/26-3/19554-18 գրությունը, «Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 24.10.2018թ. թիվ 09/1663 գրությունը և կից փաստաթղթերը, ԷԱՃԱՊՁԲ-2018/16-3-ԵՊԲՀ ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ԷԱՃԱՊՁԲ-2018/16-3-ԵՊԲՀ ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 09.10.2018թ. ժամը 09:30-ին կայացած նիստի թիվ 2 և 16.10.2018թ. ժամը 14:00-ին կայացած նիստի թիվ 3 և 18.10.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունները, Ընկերության կողմից ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 15.10.2018թ. և 16.10.2018թ. տրված եզրակացությունները.

«Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար բժշկական սարքավորումների, գործիքների և պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԷԱՃԱՊՁԲ-2018/16-3-ԵՊԲՀ ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Անիկո ֆարմ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը էլեկտրոնային աճուրդին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 1 հավելվածով՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ԷԱՃԱՊՁԲ-2018/16-3-ԵՊԲՀ ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Հանձնաժողովը 09.10.2018թ. ժամը 09:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ հավելվածով որոշել է Ընթացակարգի 7-րդ, 8-րդ, 10-րդ, 11-րդ, 20-րդ, 22-րդ և 23-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել՝ «Անիկո ֆարմ» ՍՊԸ-ին:

Հանձնաժողովը 16.10.2018թ. ժամը 14:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության.

- 1-ին կետով արձանագրել է, որ ՀՀ կառավարության 10.10.2018թ. թիվ 1101-Ն որոշմամբ 11.10.2018թ. և 12.10.2018թ. աշխատանքային օրերը տեխափոխվել են 27.10.2018թ. և 03.11.2018թ.: Նշված ոչ աշխատանքային օրերը համընկել են ԷԱՃԱՊՁԲ-2018/16-3-ԵՊԲՀ ծածկագրով էլեկտրոնային աճուրդի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից որակավորման փաստաթղթերի ներկայացման ժամկետի հետ, ինչի հետևանքով որակավորման փաստաթղթերի ներկայացման ժամանակահատվածը պետք է սահմանվեր՝ 16.10.2018թ., սակայն էլեկտրոնային աճուրդի համակարգում աշխատանքային օրերի տեխափոխում չի իրականացվել, ինչի հետևանքով սահմանափակվել է մասնակիցների կողմից որակավորման փաստաթղթերի ժամանակին ներկայացման հնարավորությունը:

• 2.2 կետով արձանագրել է, որ «Անիկո ֆարմ» ՍՊԸ-ի որակավորման փաստաթղթերի ներկայացման մասով առկա է 1-ին կետում ներկայացված խնդիրը, ինչպես նաև Ընկերությունն ունի հայտը ներկայացնելու օրվա (03.10.2018թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություններ (մասնակցի գնային առաջարկի նկատմամբ առավելագույն թույատրելի շեմն է 1.15 ՀՀ դրամ):

• 2.3 կետով որոշել է առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին որակավորման փաստաթղթերի ներկայացման հնարավորություն ընձեռել:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 15.10.2018թ. և 16.10.2018թ. տրամադրած եզրացությունների համաձայն՝ «Անիկո ֆարմ» ՍՊԸ-ն ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն՝ 34.235 ՀՀ դրամ գումարի չափով:

Հանձնաժողովը 18.10.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության.

• 1.3 կետով արձանագրել է, որ «Անիկո ֆարմ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել որակավորման փաստաթղթերը:

• 1.5 կետով որոշել է «Անիկո ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

• 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.

• 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը

համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.

• 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

• 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին.

• 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների

գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից.

• 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

«Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար՝ բժշկական սարքավորումների, գործիքների և պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված ԷԱՃԱՊՁԲ-2018/16-3-ԵՊԲՀ ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի 1-ին մասի՝

• 7.10 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն հրավերի 1-ին մասի 7.9 կետում նշված նիստն ավարտվելուն հաջորդող առաջին

աշխատանքային օրը procurement.ysmu@gmail.com հասցեով գործող էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 4-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gayane_antonyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին:

• 7.10 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն հրավերի 1-ին մասի 7.9 կետում նշված նիստն ավարտվելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում՝

ա. գնահատող հանձնաժողովին ուղղված ուղեկցող գրությամբ ներկայացնել հայտի ապահովման բնօրինակը.

բ. համակարգի միջոցով ներկայացնել առաջարկվող ապրանքի ապրանքի ամբողջական նկարագիրը.

գ. գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով.

դ. համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները նույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով).

ե. նույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը:

• 7.11 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.10 կետի 2-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման

մասին նույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային

առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

• 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

• 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով.

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են.

• 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

• 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «Անիկո ֆարմ» ՍՊԸ-ի՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա (03.10.2018թ.) դրությամբ, հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գումարը կազմել է 34.235 ՀՀ դրամ:

- «Անիկո ֆարմ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Նկատի ունենալով, որ «Անիկո ֆարմ» ՍՊԸ-ն էլեկտրոնային աճուրդին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 1 հավելվածով՝ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ԷԱՃԱՊՁԲ-2018/16-3-ԵՊԲՀ էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ընկերությունը նեկայացրել է իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն, որի արդյունքում խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իր՝ իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողություններն, ինչը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ «Անիկո ֆարմ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում Հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերը չներկայացնելով՝ խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով, Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով, ինչպես նաև Հրավերի 7.10 կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջները:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Անիկո ֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար առկա են Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

ՈՐՈՇԵՑ

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.10.2018թ. թիվ 01.1/26-3/19554-18 գրությամբ «Անիկո ֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Անիկո ֆարմ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ